Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի - 2024 թ.

12-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Արևամուտին թուխ ամպերը պարուրում են վսեմաշուք Արագածը քառագագաթ ու երկնասլաց ***կատարներով*** և ***մանրազնին*** նայողին թվում է պայծառատեսի իր ***շնորհով*** տեսնում է իրիկնային Հայաստանի ակնապարար ու հովվերգական համայնապատկերը սարերի ***փեշերին*** հանգրվանած գյուղերի արևի հրակարմիր ճաճանչներով ոսկեզօծված տների տանիքներին իրիկուն է իջնում ճրագալույցի առկայծող լույսերով ողողված ու երդիկներից դեպի երկինք են ելնում ծխի շարասյուները օձագալար կապտաթույր քուլաներով: Լուսաբացին վաղորդայնի մշուշը տարրալուծող արևից հետզհետե երևում են սարերի փթթուն լանջերը ոսկևորվում առվակները: Այդ երկնակարկառ լեռների ձյունագեղ կատարներից սկիզբ առնող աղբյուրները գիրկընդխառն միանալով կազմում են Բանոնի գետակը պաղպաջուն ու սառնորակ կոհակներով նա թվում է սրընթաց գահավիժում է ասես ժամ առաջ ***ողջունելու*** խիտ ***ծառաստաններով*** գոտևորված շեների անխոնջ բնակիչներին որ վաղ այգաբացին արթնանալով շտապում են դեպի իրենց այգիներն ու դաշտերը: Իսկ կեսօրին երբ արեգակի ոսկեդեղձան ճառագայթներն ավելի ***հեղձուցիչ*** են դարձնում տապը դրախտային ձորահովտում սաղարթախիտ ծառի ստվերում թավիշ ***կանաչին*** այծենակաճը ուսերին, աչքը մակաղած ոչխարների ***հոտին*** հանգիստն է վայելում հովիվը ըմբոշխնելով ուրցածաղկի քիմքը խտղտացնող անուշ ***բույրը***:

Ինչ հրաշալի է հայկական բնաշխարհը:

1. Կետադրի՛ր համր բնագիրը: (3 միավոր)

2. Նշի՛ր տեքստում թավ և շեղ գրված բառերի շարահյուսական պաշտոնները: (3 միավոր)

3. Տեքստից դուրս գրի՛ր չորս անկանոն բայ: Նշի՛ր՝ որ եղանակաժամանակաձևերում են նրանք դրսևորում անկանոնություն: (2 միավոր)

4. Գրի՛ր 5 պարզ նախադասություն բացառական հոլովի տարաբնույթ կիրառություններով՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը: (2 միավոր)

5. Առանձնացրո՛ւ սխալ գրված բառաձևերը. նշի՛ր ճիշտը. *հիշացրեց, խոնավացնել, օրեկան, մի՛շտապեցրու, չորսը կտոր, ի հեճուկսքեզ, փախչի՛ր, կաթացնել, ի դեմս նրա, քծնվող, ի թիվս այլոց, բացառությամբ ձեզնից, մի՛խոսեցեք, հաչալ, ինձ հետ միասին, գրեցե՛ք:* (2 միավոր)

6. Տրված բառերից ընտրի՛ր այն արմատները, որոնք կարող են կազմել համանունների զույգեր և եռյակներ՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով իմաստները. *անջրդի, խաժակ, մրահոն, մեկուսի:* (2 միավոր)

7.Գրի՛ր տրված բառերի հոմանիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ. *ցել, սնար, գեղակն, կափույր, լուտանք, գեղոն, վարանք, արտորալ, քմայքոտ, երեսփոխան:* (1 միավոր)

8. Գրի՛ր շարադրություն «Իմ տունն իմ անառիկ ամրոցն է» վերնագրով (երկուէջի սահմաններում): (5 միավոր)